



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ  
ՆՐԱՄԱՆ**

Թիվ 3-2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ  
(ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ) ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ  
ՉԱՓԵՐԸ (ՑՈՒՑԻՉՆԵՐԸ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ն» ոստիկանության ծառայողների (աշխատողների) աշխատանքի արդյունավետությունը խթանելու, պարգևատրումներ տալու իրավահարաբերություններում միասնական իրավակիրառումն ապահովելու նպատակով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ և 178-րդ հոդվածի 3-րդ մասերը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողներին (աշխատողներին) պարգևատրում տալու կարգը և չափերը (ցուցիչները)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության շտաբի, քրեական հետախուզության գլխավոր, ֆինանսաբյուջետային, ներքին աուդիտի, ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների պետերին՝ Ձեր իրավասության սահմաններում հսկողական գործառույթներ իրականացնելիս սույն հրամանի կիրառման խախտումներ հայտնաբերելու դեպքերում անհապաղ ներկայացնել դրանց բովանդակությունը նկարագրող զեկուցագրեր:

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՊԵՏ**

*(Ստորագրություն)*

**Վ. ՕՍԻՊՅԱՆ**  
«21» 03 2019թ.  
ք. Երևան

